ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ ՊԵՏՐՈՍԻ ԱՌ ԱԿԱԿ

•

Թղթոց Դիրքը կը պարունակէ շատ շահեկան թղթակցութիւն մը Ադեքսանդրիոյ Պետրոս և Ղ. Պոլսոյ Ակակ (471–489 եպիսկոպոսներուն միջև։ Այդ թուղթերուն առաջինը նակային լման չէ Թղթոց Դիրքին մէջ, թերթ մը ինկած ըլլալուն պատճառով։ Ցիշեալ Թուղթին պակսող սկզբնական մասը, որ շատ կարևոր է, կը գտնուի Ս. Աթանասիոս քանի մը ձեռագիրներուն մէջ։ Ուստի այդ թերին լրացնելու համար հոս կը հրատարակենք յիշեալ Թուղթը հանդերձ համեմատութեամբ։

Ստորև կը գտնենք մեր գործածած նշանագիրները և անոնց համապատասխան ձեռագիրներու մասին հակիրճ ծանօթութիւններ։ Իրարև բնակիր առած ենք առաջինը։

Ա = Ձեռ. ՍԹԹ. 960, թկ. 1602, ժողովածոյ, նոտրագիր, էջ 341–5։

Բ = Ձեռ. ՍԹԹ. 1138, թկ. 1668, ժողովածոյ, նոտրագիր, էջ 649–652։

Գ = Ձեռ. ՍԹԹ. 999, թուական նորագրութեան 1688, ժողովածոյ, մասամբ բոլորգիր և մասամբ նոտր, էջ 520–523։

Դ = Ձեռ. ՍԹԹ. 858, թկ. 1686էն առաջ, ժողովածոյ, նոտրագիր, էջ 465–9։

Ե = Դիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 243, սակիզբը թերի։

Թուխք առաջին, Պետրոսի պատրիարգի Աղեկսանդրացոյ, զոր գրեաց առ Ակակ ի Կոստանդինուպօլիս վասն միաւորութեան. գրեցաւ առաջին թուխք խորհրդիս։

Երանելին Ցուլիանէ սարկաւագն իմ եկն ի գիւղիցի առ իս կրեր Պետրոս պատրիարգ աղեկսանդրացոյ, և ունէր(1) ի ձեռն սուրբ զաւետարանիչն(2), ուր էր թագուցեալ ի փոքր մի սենեկի վասն ահին և հայածանացն անողորմ արքային Զենոնի, և խօսեցայ ընդ իս զրանս զայսոսիկ, եթէ մինչ դեռ ի Կոստանդինուպօլիս չլինէի վասն իւրոց իմոց, Ակակ հայրապետ եպիսկոպոսաց որ են ի Կոստանդինուպօլիս, զԻրաքիարոս զպաշտօնեա և զսենեկապետն իւր առաքեաց տարաւ զիս յեպիսկոպոսարանն ի սենեակն իւր և ասէ ցիս. աղօթես ընդ իս սարկաւագ Ցուլիանէ թէ ոչ։ Եւ ես ասեմ ցնա(3). զիարդ մարթի այդմ լինել մինչ չեմ է ուղղափառութիւնն։ Եւ յորժամ ոչ մատուցի ընդ նմա աղօթս, հրամայեաց ինձ նստել, և ոչ զոք եթող ի սենեակն, և առ ի սնարիցն գսուրբ աւետարանիչն, և երգուաւ ինձ եթէ երթ յԱղէկսանդրիա, և հարց թէ ուր թագուցեալ է տէրն իմ Պետրոս, և երդուիր նմա յիմ անձէ, որպէս ես քեզ այժմ երդնում, եթէ Նոյն աւետարանիչդ գիտեն, եթէ մինչ եկն յաւուրն առ Բաղիսիոս ի Կոստանդինուպօլիս երանելին Տիմոթէոս հայրապետն Աղէկսանդրի, առաքեցի ի տուն Բասիլիսկոսի, ուր էին օթևանք երանելոյն Տիմոթէոսի, զԻրաքարիոս պաշտօնեա և սենեկապետն իմ, և գրեցի ի քարտիսի առ երանելին Տիմոթէոս խնդրուած ձեռնագրութեամբ իմով, եթէ ժէ Ձեռագրիս առաջին էջը բանալ։ «Կանոն Աստուածածնայ Սրբոյ Կուսին»։ լման էջի մը վրայ գծուած գունազարդ նկարով մը որ կը ցուցնէ Ս. Կոյսի Ուեռումը և յղացումը Ս. Հոգիէն։ Ցաջորդ էջը գրաւուած է գեղեցիկ խորանով մը, խաչազարդ և ծաղկազարդ լուսանցազարդով, և «Երգեցէք Սրդիք Սիոնի երգ Նոր ի Ծննդեանն» բառերով, որոնք գրուած են մանրանկար գիրերով. կենդանական և ծաղկաւոր մանիֆեստներով։

ՋԱՒԷՆ ՎՐԴ. ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ

առագրի վերջաւորութեան (ամենավերջի էջը բ. կէս) երեցած կարճ յիշատակարանէն.

«Ի՞վ եղբայր ի աւարտ երգոյս վասն սիրայն քրիստոսի սակս իմ մեղապարիս մէկ հոգւոց և ողորմի ասա, վասնզի յոյժ աշխատեալ եմ ի վերայ չարակնոցին. թէ գրիչն և ի ծաղկիչն. մանաւանդ ճարտարավարն որ ծրի եմ քաշել»։

Ցացայտ է որ վերջին էջի յիշատակարանին և առաջին էջի արձանագրութեան հեղինակները բոլորովին տարբեր անձեր են։

Օրինակ մը տուած ըլլալու համար կ'արտագրի վերջաւորութեան (ամենավերջի էջը բ. կէս) երեցած կարճ յիշատակարանէն.

«Ի՞վ եղբայր ի աւարտ երգոյս վասն սիրայն քրիստոսի սակս իմ մեղապարիս մէկ հոգւոց և ողորմի ասա, վասնզի յոյժ աշխատեալ եմ ի վերայ չարակնոցին. թէ գրիչն և ի ծաղկիչն. մանաւանդ ճարտարավարն որ ծրի եմ քաշել»։

Ցացայտ է որ վերջին էջի յիշատակարանին և առաջին էջի արձանագրութեան հեղինակները բոլորովին տարբեր անձեր են։

Օրինակ մը տուած ըլլալու համար կ'արտագրի վերջաւորութեան (ամենավերջի էջը բ. կէս) երեցած կարճ յիշատակարանէն.

digitised by A.R.A.R.@

զղջանամ և նզովեմ զտուումարս ամբարչտին Ղևոնի, զիրկուս բնութիւնսն ասացողն ոչ ուղղաբար, և զնեստիքոս և զամենայն հերետիկոսս։

Եւ Օգոստիարէ որոյ յայնժամ մագիստրոս էր, և ընդունէր զնեստիքոս, դիպեցաւ արտաքս ի տանէն Բասիլիսկոսի, և յորժամ ետես զպաշտօնեայն իմ զԲրասարիոս, հրամայեաց քննել զնա, և մինչ եղիտ առ նա զքարտէսն և կարդաց զայն որ նզովեցի ես զտուումարն և զնեստիքոս և զամենայն հերետիկոսս, զքարտէզն ի նմին ժամու պատառեաց, և հրամայեաց զսարկաւագն զան հարկանել։ Եւ եկն առ իս սարկաւագն իմ մինչ զգանն էր արբեալ, և զայդ ամենայն ոչ գիտաց երանելին Տիմոթէոս, քանզի ի ներքս էր յեպիսկոպոսարանին իւրումի, որպէս ես ուստ ի մանգանէն։

Եւ արդ առաջի Աստուծոյ խնդրուածս մատուցանեմ, և պատրաստ եմ ամենեքիմբ զտեառնդ զկամսդ կատարել, և նզովեմ զտուումարն զայն որ ամբարչտութեամբ զերկուս բնութիւնս խոստովանի բաժանեալս, և զամբարիշտն զնեստիքոս, և ընդունիմ զուղիղ հաւատս, թէկ կարծիք իցեն սրբութեանդ քում թէ նենգութիւն ինչ աբարի վասն քո, որպէս զի գացիս յարքայէ Զենոնէ, կամ յեզնաստեա Աքսպիոսէ, կամ ի գլխաւորաց աստի կամ ի գինուորաց, կամ ցուցանէր զայր մի զանձն քո։ Բայց նիստ ուր եգ ի թագստի, և հրամայեա ինձ թուղթս առնել առ քեզ գաղտնաբար, ձեռնարկութեամբ իմով, կնքել նշանաւ սուրբ խաչին. նոյն պէս և դու գրեա քովք ձեռնարկութեամբ, և այլ ոք զայդ մի գիտասցէ, բայց միայն Աստուած և մեք, և այնք որք պաշտեն զմեզ։ Եթէ և կամակիցք լինիմք ընդ միմեանս վասն բանիցս այսոցիկ, զոր ես ընդ ձեզ խօսիմ և դու ընդ իս, փառք Աստուծոյ։ Եւ եթէ վասն մեզաց իմոց ոչ լսեմք միմեանց, մի ոք զընկերն մատնեսցէ, բայց նստցուք յիւրաքանչիւր տեղոջ խաղաղութեամբ։

Եւ ես կրեր հայրապետ Աղէկսանդրացոց Պետրոս, մինչ զայս ամենայն երկեա, թէ գուցէ պաշտօնեայն իմ Ցուլիանէ կաշառաւոք խաբեցաւ և կամի զիս մատնել, և ասեմ(4) ցնա, երդուիր ինձ թէ ոչ գուցէ յիմ ենդգութիւն, և թէ արդարև այնպէս երդուաւ քեզ Ակակ, մինչ առ ի ձեռն իւր զսուրբ աւետարանիչն։ Եւ ասէ ցիս Ցուլիանէ, եթէ նոյն աւետարանիչդ գիտեն, տէր Պետրոս, զի արտասուօք բազմօք ասաց ցիս Ակակ հայրապետ, թէ յորժամ եկն երանելին Տիմոթէոս յայս քաղաք և առաքեցի առ նա զԲրասարիոս սարկաւագ և սենեկապան իմ ընդ տուումարն ընդ այնմ զոր յայնժամ նզովեցի, զոր Օգոստիանն մագիստրոս պատառեաց, և գան եհար ըզսարկաւագն, ապա ի նմին ժամու գոհացաւ և երկեա յերանելոյն Տիմոթէոսէ, եթէ գուցէ ընդ նոսին և զիս նզովիցէ. խափանեցի նզովել զտուումարն, զի եղիցի միաւորութիւն եկեղեցեաց։ Այլ այժմ զղջանամ և նզովեմ զտուումարն. նոյն աւետարանիչդ գիտեն զի այսպէս առաքեաց առ սրբութիւնդ քո։

Արդ եթէ ոչ կամիցիս ընդունել զթուխթս իմ և քննել զկամս իմ, առաջի հաւատոր բեմին դատեցայց ընդ քեզ, քանզի դու միայն կարող ես բժշկել զաշխարհս ի չարեացն, զոր(5) սերմանեաց սատանա ի մէջ եկեղեցեաց։

Եւ մինչ զամենայն զայդ լուա, ես կրեր Պետրոս, երկեա յոյժ ի դատաստանէն Աստուծոյ, և ասեմ ցՑուլիանէ սարկաւագ իմ. թէ արա ընդ իս հաստատութիւն, և մի ոք գիտասցէ զխորհուրդդ զայդ, մինչ կատարեսցին կամքն Աստուծոյ։ Եւ երդուաւ ինձ։ Ցայնժամ վստահացաւ և գրեցի թուխթ իմով ձեռնարկութեամբ, և ետուս ցՑուլիանէ զնոյն բան զոր ասաց ցիս թէ գրեա քովք ձեռնարկութեամբ, և արձակեցի զնա և ասացի թէ կոչէ զքեզ և տա թուխթ, ի ձեռն մարդոյ որ քեզ հաւատարիմ թուխթ տուր բերել։ Նոյնպէս և ես ի նոսա ձեռն տամ բերել, և երդուցեալ տուր նմա զի նա(6) մի այլ ումեք պատմեսցէ զխորհուրդդ զայդ։

Եւ ասէ ցիս սարկաւագն Ցուլիանէ, եթէ է իմ ծառա որպէս զիս(7) անձն հաւատարիմ. և մոյծ զնա յեպիսկոպոսարանն իմ և երդմեցուցի ի սուրբ աւետարանիչն, զի նստցի ի Կոստանդինուպոլիս, և եղիցի միջնորդ թղթոցն զոր ես և նա գրեմք առ իրեարս ի ձեռն մանգանն իւրոյ Թէոդոսիոսի(8)։ Եւ կացեալ յաղօթս արձակեցի զնա ի նմին ժամու։ Եւ եմուտ ի նաւ, այն

digitised by A.R.A.R.@

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Ս. ԿԱՐԱՊԵՏ

•

ՏԵՂԱԴՐԱԿԱՆ.— Սիւնեաց նահանգի Երնջակ գաւառին մէջ կը գտնուի Ս. Կարապետի Վանքը, Ապարակունիք գիւղին արեւմտեան կողմը, կէս քիլոմէթր հեռաւորութեամբ։ Շրջապատուած էր հսկայէն պարիսպով։ Եկեղեցին կառուցուած է յանուն Ս. Յովհաննէս Կարապետի, որուն անը կը կազմէր Վանքին գլխաւոր սրբութիւններէն մին.— Սիսական, էջ 378։ Սմբատեանց, Երնջակ, էջ 1։ Բնաշխարհիկ Բառարան, Ա. էջ 685։

ՊԱՏՄԱԿԱՆ.— Ս. Կարապետի Վանքը պատմութեան մէջ երեւելի կը հանդիսանայ միայն։ դարու կէսէն սկսեալ, երբ հիմնական վերաշինութեամբ կը դառնայ Երնջակ գաւառի գլխաւոր մենաստանը։ Վանքին վանահայրերուն և անոնց գործունէութեան մասին ընդարձակօրէն գրած է Մեսրոպ Արք. Սմբատեանց։ Այդ վանահայրերուն գաւառանը կը կազմուի այսպէս, զանց ընելով նորագոյնները։

1.— Եսայի Եպս. Մեղրեցի, Կարճաւանցի, 1639–+66.— Աշակերտ Փիլիպպոս Կաթողիկոսի, որուն կողմէ առաջնորդ կը կարգուի Ս. Կարապետի Վանքին։ Գործակցութեամբ Ղազար Վարդապետի (+1662) և ձեռամբ յոգնահնար Դաւիթ վարպետի հիմովին կը վերաշինէ Ս. Կարապետի տաճարը, որուն նաւակատիքը կ'օրհնուի 1653 Հոկտ. 17ին.— Դաւիժեցի, էջ 347։ Երնջակ, էջ 10, 118, 138, 149, 177, 285, 335, 339–40։

2.— Արիստակես Բաբուեցի, 1667?–+1673.— Երնջակ, 53, 161–2, 332։

3.— Սիմեոն Վարդապետ, 1674?–+1679.— Երնջակ, 332։ Ա. Վրդ. Մեղրպետեան, Հնութիւնք Հայրենեաց, 1872, էջ 124։

4.— Մատթեոս Արք. Ապրակունեցի, 1680?–+1704.— Երնջակ, 179–80, 332։ Սիսական, էջ 368։

5.— Սիմեոն Վարդապետ, 1704?–1713?.— Սիսական, էջ 355, 363։

6.— Մեսրոպ Վրդ. Նախիջեւանցի, 1713?–20?.— Այլազ Եսայի Շնորհեցի չինել տուած է մատուռ մը Ս. Ստեփանոսի նուիրուած։ Իր առաջնորդութեան չորրորդ տարին իբրեւ իր հոգեծին գաւակները կը յիշուին Եղիա, Յովհաննէս, Եսայի և Մինաս Վարդապետներ, ինչպէս նաև Մինաս, Վարգան, Կարապետ, Գրիգոր, Սողոմոն, Ղազար, Մխիթար և Յովհաննէս Քահանաներ.— Երնջակ, 7, 40, 53։ Էջմիածին, 1961, Զ. 60. Է. 61։

7.— Եսայի Արքեպիսկոպոս, 1738.— Երնջակ, 429, 434։

8.— Մկրտիչ Եպս. Զանկեցի, 1740–47.— Որդի Մկրտիչ Քահանայի և եղբայր Ղազար Կաթողիկոսի (1737–51)։ Իր նախաձեռնութեամբ Շնորհեցի Նաղաշ Յովհաննէսի որդիները, յայտնի նկարիչներ Յակոբ և Յարութիւն, կը նկարազարդեն Ս. Կարապետի սեղանը.— Երնջակ, 6, 114, 464–6։

9.— Մատթեոս Արքեպիսկոպոս, +1755.— Երնջակ, 334։

10.— Կարապետ Վարդապետ, 1756–80.— Նոյն, 54, 451–3, 458։

11.— Յոհան Վրդ. Գագեցի, 1781–+1787.— Նոյն, 459, 461։

12.— Կարապետ Եպիսկոպոս, 1787–+94.— Նոյն, 462, 463։

13.— Մեսրոպ Վրդ. Փորադուսեցի։ 1800.— Նոյն, 55։

որ Աստուծոյ հանոյ և մարդկան գրեաց(3) առ իս վաղվաղակի, և զթութիւնն իմ եռաս բերել առ քեզ կնքով և ի վերոյն չգրեցի, մինչև ուսանիմ ի քէն թէ որպէս են կամք քո առ իս, և կնքեցի զթութիւնդ իմ խաչիւ ի վերուստ։

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

---

(1) Եւ ունէր, Զունի Գ։
(2) աւետարանն, ԲԳ։
(3) ցնա, Զունի Բ։
(4) ասէ, Դ. ասի, Բ։
(5) Ասկէ կը սկսի Թղթոց Գրքի թերի օրինակը։
(6) նա, Զունի Ե։
(7) զիմ, ԲԴ Ե։
(8) Թէոգոսի, Ե։
(9) գրեցաս, Ե։

digitised by A.R.A.R.@